**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

25-ը մայիսի 2018թ.
ժամը $11^{30}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Ն. Արշակյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ.Մարդոյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ.Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ՙ ավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներոհիշյալ դեպքերի.

- ներկայացված փաստաթղթերում բացակայում են նախկինում կատարած պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,
- 1-ին չափաբաժնի մասով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է, որ ասեղը ապահովված է AISI 470 հատուկ համաձուլվածքով, սակայն նշված չէ համաձուլվածքի մետաղական կազմը՝ տոկոսային հարաբերակցությամբ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել դրա համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին (ընթացակարգի հրավերում հստակ նշված է ասեղի համաձուլվածքի բաղադրության մետաղական կազմի նվազագույն պահանջները):

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, սակայն մասնակցի՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հավեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հավեկշռային արժեքը:***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ.Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շտկումները՝ հանձնաժողովի կողմից քննարկելու վերջնաժամկետի օրը, ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոլյան |
| Գնահատող | Ն. Արշակյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ.Մարդոյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 04-ը հունիսի 2018թ.
ժամը $11^{30}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա ավագ լեյտենանտ Ս. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ.Մարդոյան)

1. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից կողմից, որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից կողմից, որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 Քննարկելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից, որպես շտկում ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից առկա անհամապատասխանությունները շտկվել են, բացառությամբ հետևյալ դեպքի. քանի որ *ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի* կողմից տրված եզրակացության համաձայն «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի՝ ***հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում էր ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, հանձնաժողովը 25.05.2018թ. ծանուցել էր մասնակցին՝ առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: Քննարկելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում որպես շտկում ներկայացված փաստաթուղթ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դա գնահատել ոչ բավարար հետևյալ հիմնավորմամբ. ներկայացված փաստաթղթի բովանդակությունից պարզ չէ, թե որ կազմակերպության տվյալներն է այն ներառում:***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը: Հանձնաժողովը որոշեց վերջինիս տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.2 **«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Մեգիէլ» ՍՊԸ-ին**

1.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և **«Մեգիէլ» ՍՊԸ-ին** առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու իրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ **«Մեգիէլ» ՍՊԸ-ին,** որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ.Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **«Մեգիէլ» ՍՊԸ-ին** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնահատող Ն. Հարությունյան

Գնահատող Ս. Նիկոյան

Գնահատող Ն. Արշակյան

Գնումները համակարգող՝ Ռ.Մարդոյան